ԴԱՍԱՎԱՆԴԻՐ, ՀԱՅԱՍՏԱՆ

www.teachforarmenia.org
info@teachforarmenia.org
+37460505515

Այսօր Հայաստանի այս կամ այն վայրում ծնված լինելդ շատ հաճախ որոշում է քո ապագան: Մենք ջանում ենք փոխել դա:

Կրթական հնարավորությունների անհավասարության պատճառով Հայաստանի տասնյակ հազարավոր երեխաներ զուրկ են մնում բարձրագույն կրթություն, մասնագիտական փորձ և ֆինանսական ապահովություն ձեռք բերելու համար անհրաժեշտ հմտություններից:

Այս անհամաչափությունն ավելի է խորացնում Հայաստանի ամենահրատապ սոցիալական խնդիրները՝ ներառյալ թուլացած տնտեսությունը, որը նպաստում է «ուղեղների արտահոսքին» ամենատաղանդավոր երիտասարդների շրջանում, որոնք լքում են երկիրը այլ հնարավորությունների որոնումներում:

«Դասավանդի՛ր, Հայաստա՛ն»-ը սոցիալական ներազդեցության ուղղվածությամբ կազմակերպություն է, որը զբաղվում է կրթական հավասար հնարավորությունների խնդիրներով:

Ուսուցչական առաջնորդության միջոցով մենք փորձում ենք ապահովել կրթական գերազանցության և հնարավորությունների հասանելիություն Հայաստանի յուրաքանչյուր երեխայի համար: Մենք հավաքագրում ենք Հայաստանի և Սփյուռքի ամենախոստումնալից երիտասարդ առաջնորդների շրջանից՝ առնվազն երկու տարի դասավանդելու առավել կարիքավոր դպրոցներում: Մենք ուղղորդում ենք աչքի ընկնող բուհական շրջանավարտների և երիտասարդ մասնագետների էներգիան, խանդավառությունն ու եռանդը՝ Հայաստանի տարբեր շրջաններում նրանց որպես ոգեշնչված ուսուցիչներ և առաջնորդներ (Մասնակիցներ) տեղակայելու համար:

Մենք կերտում ենք կրթական գերազանցության առաջամարտիկներ: Մենք զարկ ենք տալիս կրթական համաչափության ջատագովների մի շարժման, որոնց առաջնորդության ջիղը ձևավորվում է նրանց դասարանային փորձառությամբ: Այսօր այս առաջնորդները ոգեշնչում են իրենց աշակերտներին, իսկ վաղը նրանք կերտելու են ապագա Հայաստանը:

Իրենց երկամյա առաքելության ընթացքում Մասնակիցներն անցնում են մեր Առաջնորդության զարգացման ծրագիրը, որը հիմնված է մեր գլոբալ գործընկեր «Կրթություն բոլորի համար»-ի նախաձեռնած «Կրթությունը՝ որպես առաջնորդություն» մոդելի վրա և 30 տարի շարունակ կիրառվում է 50 երկրում: Որպես ուսուցիչներ, օրինակելի կերպարներ և համայնքային առաջնորդներ՝ մեր Մասնակիցներն իրենց հետքն են թողնում հազարավոր երեխաների կյանքում՝ թե՛ դասարանի ներսում, թե դրանից դուրս: Նրանք ոգեշնչում են իրենց համայնքներին՝ հարևաններին համախմբելով կայուն զարգացման նախագծերի միջոցով տեղական կարիքների հստակեցման և դրանց բավարարման լուծումների շուրջ:

Իրենց երկամյա առաքելության ընթացքում և դրանից հետո այս առաջնորդները չեն դադարեցնում իրենց ջանքերը առավել բարելավ Հայաստան ունենալու հեռանկարի ուղղությամբ:

ՄԵՐ ՆԵՐԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՅՍՕՐ

7+	100+	14000+	120+	80+
ՄԱՐԶ	ԴՊՐՈՑ	ԱՇԱԿԵՐՏ	ՄԱՍՆԱԿԻՑ	ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԴԵՍՊԱՆ



ՏԵՍԼԱԿԱՆԸ

Մենք ձգտում ենք ունենալ այնպիսի Հայաստան, որտեղ բոլոր երեխաները՝ անկախ սոցիալ-տնտեսական հանգամանքներից, կունենան հնարավորություն՝ բացահայտելու իրենց ողջ ներուժը գերազանց կրթության միջոցով:

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Մեր առաքելությունն է նվիրյալ առաջնորդների համազգային շարժման խթանումը՝ հանուն Հայաստանի բոլոր երեխաների կրթական հնարավորությունների ընդլայնման:

Մելիք-Ադամյան 2/1
Երեւան, Հայաստան, 0010

ՄԵՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ

Մեր ծրագրի Մասնակից Նարե Ղազարյանին հանդիպելուց առաջ Դիանան միշտ չի եղել ամենաակտիվ աշակերտը: Իր նկատմամբ անհատական ուշադրության և աջակցության շնորհիվ նա սկսեց առաջադիմել դպրոցում: Դիանան հայաստանյան հեռավոր և աշխարհից փոքր ինչ կտրված գյուղերից է: Նարեն նրան խրախուսեց մասնակցելու Հնդկաստանում անցկացվող Երեխաների կրթական հեղափոխության կոնֆերանսին և օգնեց դիմումի հայտի ներկայացման գործընթացում:
Կոնֆերանսի ընթացքում խորագրով հետաքրքրված աշակերտների և փորձագետների մոտ 100 հոգանոց միջազգային խումբը քննարկել է կրթական հայեցակարգեր և գաղափարներ՝ միտված առկա կրթական համակարգերի բարեփոխմանը: Միջոցառումը կազմակերպվել էր «Դասավանդիր, Հնդկաստան»-ը՝ մեր գլոբալ գործընկեր «Կրթություն բոլորի համար»-ի աջակցությամբ: Հայաստանի աշակերտներին նմանատիպ փորձերի հնարավորության ընձեռումը համահունչ է լայն աշխարհընկալմամբ և ապագայում ինքնավստահ առաջնորդներ լինելու համար անհրաժեշտ գիտելիքներով երեխաներին զինելու մեր նպատակներին:

Դիանա Խլղաթյան, աշակերտ
Արմավիրի մարզ, Վանանդ գյուղ

Թոմաս Տողրամաջյան, 5-րդ սերնդի Մասնակից,
Անգլերեն լեզվի ուսուցիչ.
2019-2021թթ. Լոռու մարզ, Դեբեդ գյուղ

ՄԵՐ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

Թոմաս Տողրամաջյանը ծնվել է Ամերիկայի Միացյալ Նահանգներում: Սովորել է Մինեսոթայի համալսարանում՝ մասնագիտանալով քաղաքագիտության ոլորտում: Թոմասը միշտ հետաքրքրվել է իր հայկական արմատներով եւ այդ արմատների հանդեպ ունեցած սերն էլ նրան բերել է Հայաստան՝ որպես «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի Ուսուցիչ-առաջնորդ:

Այժմ Թոմասը դասավանդում է Լոռու մարզի Դեբեդ համայնքի միջնակարգ դպրոցում:Նա վարում է նաեւ արտադասարանական անգլերենի խմբակներ եւ անհատական աջակցություն տալիս այն աշակերտներին, ովքեր ցանկանում են մասնակցել միջազգային ծրագրերի:

ՄԵՐ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

Ծրագրին իր մասնակցության ընթացքում Բիայնան եղել է ոգեշնչված ուսուցիչ և առաջնորդ: Մենք նրա մեջ տեսնում էինք կրթական քաղաքականության ոլորտում գործելու մեծ ներուժ և նրան ընձեռեցինք քաղաքականության բարեփոխումների ուղղությամբ վերապատրաստումների, ռեսուրսների և մասնագիտական փորձի հնարավորություններ: Մեր ծրագրին իր երկամյա մասնակցությունից հետո նա ընդգրկվեց «YES Հայաստան» ծրագրում, որը գործում է Կառավարության կայուն բարեփոխումների ուղղությամբ: Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «YES Հայաստան» ծրագիրը ներգրավում էր բարձր որակավորմամբ և ոգեշնչված երիտասարդների Հայաստանից և Սփյուռքից՝ նախարարությունների հետ ամենատարբեր ուղղություններով աշխատելու համար:
Այժմ Բիայնան աշխատում է ՀՀ կրթության և գիտության նախարարությունում՝ իր նպաստը բերելով ուսուցիչների որակավորման, կրթության գնահատման նոր համակարգերի մշակմանը և կրթական քաղաքականության բարեփոխումների այլ բնագավառներում: Այս ամենը չափազանց կարևոր է Հայաստանում դասավանդման նոր մշակույթի ձևավորման համար և համահունչ է առավել բարելավ Հայաստանի հեռանկարով գործող խանդավառ և փոփոխությունների ձգտող առաջնորդների կերտման մեր առաքելությանը:

Բիայնա Ամիրջանյան,
կրթության հավասարության դեսպան,
աշխարհագրության ուսուցչուհի
2015-2017թթ. Լոռու մարզ, Կաթնառատ գյուղ

ՄԻԱՑԵՔ ԵՎ ԱՋԱԿՑԵՔ

Կատարեք Ձեր ներդրումը մեր երեխաների մեջ այսօր: Կատարեք Ձեր ներդրումը մեր ապագայում: Միացեք մեր շարժմանը:

Դիմե՛ք՝ դառնալու մեր ծրագրի Մասնակից կամ թիմակից:

Աջակցե՛ք մեզ՝ նպաստելով մեր գործին, հովանավորելով համայնքներին կամ օգնելով ֆոնդերի հայթայթման գործում:

Ցանկանում եք մասնակցել մեր շարժմանը: Կապվե՛ք մեզ հետ **info@teachforarmenia.org** էլեկտրոնային հասցեով կամ այցելե՛ք www.teachforarmenia.org կայք: